

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL  
OF  
ARABIC STUDIES

№ 11

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
YEREVAN YSU PRESS

2019

*Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության  
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by the decision of the scientific council of  
the Oriental Studies Department, Yerevan State University*

**Խմբագրական խորհուրդ**

**Editorial Board**

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ.,  
պրոֆեսոր (նախագահ)  
Ռուբեն Կարապետյան  
պ.գ.դ., պրոֆեսոր  
Արշակ Փոլադյան  
պ.գ.դ., պրոֆեսոր  
Գուրամ Չիկովանի  
բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)  
Մուշեղ Ասատրյան  
PhD (Կանադա)  
Սոնա Տոնիկյան  
բ.գ.թ., դոցենտ  
Հայկ Քոչարյան  
պ.գ.թ., դոցենտ

Prof. David Hovhannisyan  
(editor in chief)  
Prof. Ruben Karapetyan  
Prof. Arshak Poladyan  
Prof. Guram Chikovani  
(Georgia)  
Mushegh Asatryan, PhD  
(Canada)  
Dr. Sona Tonikyan  
Dr. Hayk Kocharyan

*Կազմին՝ Արդ Ալլահ Մուսավիր, «Կրոնագետների ժողով», 16-րդ դ.  
կես. պահվում է Նեյտոն-Ատկինսի արվեստի թանգարանում,  
Կանզաս, Միսուրի:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### *Գայանե Մկրտումյան*

ԱՍԱՆԱՆՅԱՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ  
ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....7-19

### *Հասմիկ Փարեմուզյան*

ԱՍԱԲԻԱՅԱՆ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ ԸՍՏ ԻԲՆ  
ԽԱԼԴՈՒՆԻ.....20-33

### *Անդրանիկ Հարությունյան*

ՕՄԱՆԻ ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ».....34-47

### *Արա Մաթևոսյան*

ՍԱՌԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ  
ՏՐԱՍՆՖՈՐՄԱՑԻԱՆ 2006-2017ԹԹ.-ԻՆ.....48-70

### *Արսեն Առաքելյան*

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ  
ՆԱՀԴԱՅԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.....71-88

### *Թերեզա Ամրյան*

ԵՋՐԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԵՐՈՒՄ ԱՍՏՈՒՆ ՄԵԾԱՐԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ  
ՄԻ ՇԱՐՔ ՊԱՏՎԱՆՈՒՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....89-111

### *Մարիամ Շիպակցյան*

ԱՐԱԲԱԿԱՆ ՀԻՓ ՀՈՓԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ  
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ.....112-126

*Սեդա Տիգրանյան*

ԻՍԱՆ ԵՎ «ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ» ԴԱՎԱՆԱՆՔԸ  
ՂՈՒՐԱՆՈՒՄ ՈՒ ՍՈՒՆՆԱՅՈՒՄ ..... 127-142

*Արմինե Հակոբյան*

ԱԲՈՒ ԲԱՔԸ ԱՍՍՈՒԼԻՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ..... 143-165

*Հայկ Քոչարյան*

«ԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ..... 166-173

*Ռուզաննա Հովհաննիսյան*

ԻՍՄԱՅԻԼԱԿԱՆ ԴԱՌԻԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ.  
ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ  
ԻՍՄԱՅԻԼԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 174-188

## CONTENT

*Gayane Mkrtumyan*

THE CONQUEST OF THE SASANIAN PERSIA  
IN THE MEDIEVAL MUSLIM AND  
ARMENIAN HISTORIOGRAPHY ..... 7-19

*Hasmik Paremuzyan*

IBN KHALDUN'S VIEW ON ASABIYYA  
AND CIRCLES OF POWER ..... 19-33

*Andranik Harwutyunyan*

THE CENTRAL ROLE OF OMAN  
IN THE "THREE SEA SYSTEM" ..... 34-47

*Ara Matevosyan*

THE TRANSFORMATION OF THE ROYAL  
SAUDI FAMILY (2006-2017) ..... 48-70

*Arsen Arakelyan*

THE STANDARTISATION PROCESS OF THE ARABIC  
IN NAHDA PERIOD ..... 71-88

*Tereza Amryan*

ON SOME EPITHETS OF GOD WITH IRANIAN AND  
ARABIC ORIGIN IN YEZIDI RELIGIOUS HYMNS ..... 89-111

*Mariam Shipaktsyan*

ARABIC HIP HOP AS AN INCARNATION OF THE  
MEDIEVAL ARABIC POETIC TRADITION ..... 112-126

*Seda Tigranyan*

PROPHET ISA AND THE CONCEPT OF THE HOLY  
TRINITY IN THE QUR'AN AND SUNNAH ..... 127-142

*Armine Hakobyan*

ABU BAKR AS-SULI AND HIS ERA.....143-165

*Hayk Kocharyan*

SOME ASPECTS OF THE DEVELOPMENT OF  
THE CONCEPT OF ISLAMISM.....166-173

*Ruzanna Hovhannisyan*

ISMAILI DAWA IN THE MODERN PERIOD. APPLICATION OF  
ADAPTATION OF MECHANISMS IN CONTEXT OF  
TRANSFORMATION OF ISMAILI IDEAS.....174-188

«ԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հայկ Քոչարյան

պ.գ.թ., դոցենտ

ԵՊՀ արաբագիտության ամբիոն

էլ-փոստ՝ [hkocharyan@ysu.am](mailto:hkocharyan@ysu.am)

*Բանալի բառեր՝ իսլամականություն, իսլամիզմ, հետիսլամականություն, փոստիսլամիզմ, քաղաքական իսլամ*

Մույն հոդվածում փորձ է արվում ուսումնասիրելու «իսլամականություն» (իսլամիզմ) եզրի առաջացման պատմությունը, իմաստը և արդի կիրառման առանձնահատկությունները:

Իսլամական մեծամասնություն ունեցող երկրներում տեղի ունեցող իրադարձություններն ուսումնասիրելիս հնարավոր չէ չբխվել այն հարցին, թե ինչպես բնութագրել այն մուսուլմաններին, ովքեր օգտագործում են իսլամը, որպես իշխանության և իրավունքի աղբյուր՝ իրենց քաղաքական և հասարակական գործողության համար: Արդի խոսույթում այս գործողությունները շատ հաճախ բնորոշվում են «իսլամական» կամ «մուսուլմանական արմատականություն» եզրով կամ բնութագրվում են որպես «իսլամական ծայրահեղականություն» կամ «իսլամականություն»: Մասնագիտական գրականության մեջ առկա են տարբեր, շատ հաճախ իրար հակասող մոտեցումներ այս հարցերի վերաբերյալ: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում այս հասկացությունները շարունակում են մնալ բուռն

քննարկումների առակա: Սույն հոդվածը ինչպես նշվեց անդրադառնում է միայն «իսլամականություն» հասկացությանը:

«Իսլամականություն» եզրը իր ժամանակակից ընկալմամբ ի հայտ եկավ 1980-ականների վերջին՝ ֆրանսիական ակադեմիական միջավայրում: Այնուհետև, ներմուծվեց անգլալեզու գիտական դիսկուրսի մեջ և կարելի է նկատել «իսլամականություն» և «իսլամական ֆունդամենտալիզմ» հասկացությունների նույնիմաստային, հավասագոր կիրառությունը մասնագիտական գրականության մեջ: Կարծիքներ կան, որ 2001-ի սեպտեմբերի 11-ից հետո «իսլամականություն» եզրի օգտագործումը գուցե նույնիսկ գերադասելի է դարձել ամերիկյան ակադեմիական միջավայրում:

«Իսլամականություն» (իսլամիզմ) եզրը առաջին անգամ հանդիպում է ֆրանսերենում՝ XVIII դարի կեսերին: Սակայն դա չէր վերաբերում տերմինի ժամանակակից օգտագործմանը, այլ, բնութագրում էր մուսուլմանների դավանած կրոնը, որն այնուհետև ֆրանսերենում ձևակերպվեց որպես mahoméisme (մահմեդականություն). այն դավանանքը, որը դավանում և ուսուցանում էր Մուհամմադ մարգարեն:

XVIII դարում բավականին ծավալուն ուսումնասիրություններ եղան իսլամի վերաբերյալ և լուսավորության մտածողները հիանալի գիտեին, որ մուսուլմանները իրենց հավատն անվանում են իսլամ, այլ ոչ թե մահմեդականություն: Կարելի է նկատել, որ փորձեր են արվում իսլամը հասկանալ իր իսկ արժեքային համակարգի միջոցով:

«Իսլամիզմ» տերմինի ստեղծումը վերագրվում է ֆրանսիացի փիլիսոփա Վոլտերին (1694-1778): Վոլտերը հետազոտական մեծ հետաքրքրություն էր դրսևորում իսլամի նկատմամբ և իր գրվածքներում շատ էր անդրադառնում վերջինիս տարբեր կողմերին: Ուսումնասիրությունների արդյունքում նա հասկացավ



Մուհամմադի դերն ու նշանակությունը իսլամում, այդ իսկ պատճառով շտկում մցրեց՝ այս կրոնը անվանելով «իսլամիզմ»<sup>1</sup>: Անշուշտ այս տերմինով Վոլտերը հասկանում էր իսլամն ընդհանրապես՝ չտալով վերջինիս այն իմաստը, որը ձեռք է բերել այսօր:

XIX դարի ընթացքում «իսլամիզմը» իսլամ իմաստով սկսվում է օգտագործվել ամբողջ Եվրոպայում: Բազմաթիվ են գիտական գրականության օրինակները: 1900 թվականին լույս տեսած «Նոր անգլերենի բառարանում» (այժմ հայտնի է որպես Օքսֆորդի անգլերեն բառարան) «իսլամիզմը» բնորոշում էր որպես «մուսուլմանների կրոնական համակարգ. Մահամեդականություն»: Նույնիսկ այնտեղ կարելի է հանդիպել «իսլամիստ» տերմինը, որը սահմանվում է որպես «ուղղափառ մահմեդական»:

Չնայած այս ամենին, պետք է նշել, որ ընդհուպ մինչև 20-րդ դարի առաջին կեսը ակադեմիական շրջանակներում տարածված էին և զուգահեռաբար օգտագործվում էին «մահմեդականություն», «իսլամիզմ», «մահմեդական» և «իսլամիստ» տերմինները: Այս տերմինների օգտագործումից չեն խուսափել նույնիսկ եվրոպական գիտական միջավայրում իսլամագիտությունը որպես գիտություն հիմնադրողները <sup>2</sup> : Իրավիճակը փոխվում է 1946-ին, երբ բրիտանացի արևելագետ Հ.Ա.Ռ. Գիբբը իր գրքի ներածառության մեջ գրում է, որ «Ժամանակակից մուսուլմանները չեն սիրում «մուհամեդական և մուհամմադականություն» տերմինները, քանի

<sup>1</sup> St u Kramer M., Coming to Terms: Fundamentalists or Islamists? // Middle East Quarterly, Spring 2003, pp. 65-77

<sup>2</sup> St u օրինակ՝ Ignatz Goldziher, Muhammedanische Studien, Halle a.S., Niemeyer, 1889, D. S. Margoliouth, Mohammedanism, London: Williams and Norgate, 1911, A.A. Fyze, Outlines of Muhammadan Law, Calcutta, New York: Indian Branch, Oxford University Press, 1949, Joseph Schacht, Origins of Muhammadan Jurisprudence, London: Oxford University Press 1950.

որ, ըստ իրենց դրանք կրում են Մուհամմադի երկրպագության տարրեր, ինչպես որ քրիստոնյան և քրիստոնեությունը ենթադրում են Քրիստոսի երկրպագություն»։ Հաջորդող տեքստում Գիբբ հավատացյալներին անվանում էր մուսուլման, իսկ հավատքը՝ իսլամ<sup>3</sup>։

Պետք է նշել, որ քսաներորդ դարի վերջում «իսլամիզմ» եզրը նույնպես սկսեց անհետանալ բառապաշարից։ Շատ գիտնականներ պարզապես նախընտրում էին ավելի կարճ և զուտ արաբական տերմինը՝ իսլամ։ 1913 թ.-ին նախաձեռնած և 1938 թ.-ին ավարտին հասցված «Իսլամի հանրագիտարանը» բազմահատորյակը, որի ստեղծմանը ներգրավված էին արևելագետների միջազգային հանրությունը, «իսլամիզմ» եզրին փոխարինում է «իսլամ» եզրը։ Այդ ժամանակահատվածից սկսած՝ գիտական գրականության մեջ հանդիպում ենք «իսլամ» եզրը, որը կիրառվում է իսլամը՝ որպես կրոնական համակարգ բնութագրելու համար և գալիս է փոխարինելու «իսլամիզմ» եզրին։

20-րդ դարի վերջին աշխարհում տեղի ունեցող գործընթացները բացահայտեցին նոր երևույթներ, որոնցում իսլամը սկսում է նոր գաղափարական և քաղաքական մեկնաբանություններ ստանալ, ինչն էլ իր հերթին ստիպեց գիտնականներին և հետազոտողներին այլընտրանքային հասկացություններով տարբերակել իսլամը՝ որպես ժամանակակից գաղափարախոսություն և իսլամը՝ որպես հավատք։

Ֆրանսիական ակադեմիական միջավայրը փորձեց վերլուծել և հասկանալ այն գործընթացները, որոնք տեղի էին ունենում 1970-ական թվկաների վերջում նոր ձևավորվող իսլամական շարժումների շրջանում։ Այս երևույթները նկարագրելու համար

<sup>3</sup> See H.A.R. Gibb, *Mohammedanism*, London: Home University Library, 1949, էջ 1

Ֆրանսիական ակադեմիական միջավայրում սկսեց օգտագործվել «իսլամականություն» (իսլամիզմ՝ Islamisme) եզրը, որը այդ տերմինի յուրօրինակ վերականգնում կարելի է համարել: Սակայն, պետք է նշել, որ ֆրանսիական ակադեմիական շրջանակներում այս եզրը միանշանակ չընդունվեց: Հիմնական հակադարձողներից էր Մաքսիմ Ռոբինսոնը, որը գտնում էր, որ «իսլամիզմ» եզրը չի տարանջատում սովորական հավատացյալին մոլեռանդից: Նա առաջարկում էր «ինտեգրիզմ»<sup>4</sup> եզրը, քանի որ այդ եզրը արդեն իսկ գիտական շրջանառության մեջ առկա էր և լիովին բնութագրում էր այն գործընթացները, որոնցով անցնում էին իսլամական շարժումները: Նրա ջանքերը ապարդյուն անցան, քանի որ, ինչպես գիտենք, հետագա գիտական շրջանառության մեջ ամրագրվեց «իսլամիզմ» եզրը:

Անգլալեզու ակադեմիական միջավայրում «իսլամիզմ» եզրի լայն կիրառությունը ընդունված է կապել ֆրանսիացի արաբագետ Ժիլ Կեպելի անվան հետ, որի 1984 թվականին ֆրանսերեն, ապա 1985 թվականին անգլերեն հրատարակված «Մուսուլմանական էքստրիմիզմը Եգիպտոսում. Մարգարեն և փարավոնը» աշխատությունը բեկում մտցրեց տվյալ եզրի կիրառության հարցում: Անգլերեն թարգմանության մեջ ֆրանսերեն «*islamiste*» եզրը անգլերեն թարգմանվում է «Islamicist», որից էլ հետագայում «իսլամիստ» եզրը մտնում է գիտական լայն շրջանառության մեջ<sup>5</sup>:

«Իսլամիզմ» և «իսլամիստ» եզրերը ոչ միանշանակորեն ընդունվեցին ակադեմիական միջավայրում, եղան բազմաթիվ հակընդդեմ հրապարակումներ, սակայն 1990-ականների վերջից և

<sup>4</sup> Ֆրանսիական հասարակաքաղաքական և փիլիսոփայական դիսկուրսում այս եզրով բնորոշվում են բոլոր կրոնական ծայրահեղական շարժումները:

<sup>5</sup> Հմմտ. Gilles Kepel, *Le prophète et pharaon: Les mouvements islamistes dans l'Égypte contemporaine*, Paris: La Découverte, 1984, և Gilles Kepel, *Muslim Extremism in Egypt: The Prophet and the Pharaoh*, Berkeley: University of California Press, 1985.

2000-ականների սկզբից կարելի է ասել, որ այս եզրերը սկսում են ավելի ու ավելի հաճախակի օգտագործվել՝ իսլամի քաղաքական դրսևորումները նշելու համար, ինչը օգնում է տարբերակում մտցնել իսլամի «ծայրահեղական» և չափավոր դրսևորումների միջև: Պետք է նշել նաև, որ այս եզրերի կիրառությունը մեդիատիրություն միանշանակ չէր, շատ հաջախ նկատվում է «իսլամական ֆունդամենտալիզմ», «իսլամիզմ», «ծայրահեղականություն» եզրերի կիրառության խառնաշփոթ:

Այս բանավեճին զուգահեռ, 2000-ականների սկզբին ակադեմիական շրջանակներում սկսվում է մեկ այլ բանավեճ: Մասնավորապես, սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, որոշ հետազոտողներ փորձեր են անում վերաիմաստավորել և հասկանալ այն հայեցակարգերը որոնցով առաջնորդվում են իսլամական շարժումները: Արդյունքում գալիս են այն եզրակացության, որ նոր իրավիճակում գործող իսլամական շարժումների գործողությունները որակապես տարբերվում են նախորդ շրջանից և սկսում են ձևակերպվել նոր հայեցակարգեր: Այս նոր իրականության մեջ գործող «հին-նոր» իսլամական շարժումները տարանջատելու համար ակադեմիական միջավայրում սկսում է օգտագործվել «հետիսլամականացում» (post-islamism) և «նեոարմատականություն» (neo-fundamentalism) եզրերը:

Ընդունված է «Հետիսլամականացում» եզրի հեղինակ համարել Ժամանակակից իսլամական շարժումների ճանաչված մասնագետ Օլիվիեր Ռուային<sup>6</sup>, որը գտնում էր, որ «իսլամիզմը», ըստ էության, իսլամական միջավայրի կոնստուկտ է, իսկ այն հանգմանքը, որ թվում է թե ծագում է արևմտյան ակադեմիական միջավայրից, այն պատճառով է, որ Այաթոլլահ Խոմեյնիի նման մտածողները խորապես ազդված էին արևմտյան արմատական մտքով:

<sup>6</sup> Olivier Roy, "Les islamologues ont-ils inventé l'islamisme?," L'Esprit, Aug.-Sept. 2001, pp. 116-38.

Աստիճանաբար բռնության և ռազմատենչության տարրերը սկսում են դառնալ իսլամական շարժումների գործողությունների մեկնաբանման անբաժան մասը, հատկապես 2001թ սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո: Հետազոտողների այն մասը, որը գտնում էր/է, որ պետք է տարանջատում մտցնել բռնության գործողություններով առաջնորդվող և հանդուրժողական իսլամական շարժումների միջև, առաջարկում են վերջինների բնութագրել որպես «քաղաքական իսլամի» ներկայացուցիչներ, ինչը ինքնին խնդրահարույց է, քանի որ պատմականորեն իսլամում կրոնը տարանջատված չէ քաղաքականությունից:

Այս անդրադարձը ցույց է տալիս, որ իսլամում տեղի ունեցող գործընթացները և դրանց դրսևորումները ժամանակակից աշխարհում բնութագրելու համար օգտագործվող եզրերի միջև հաճախակի տեղի են ունենում իմաստային տարընթերցումներ և տարընկալումներ: Կարևոր է հասկանալ տվյալ հասկացության կայացման պատմությունը որպեսզի հնարավորինս կարողանալ խուսափել երևույթների ոչ համարժեք բնութագրումից:

## **SOME ASPECTS OF THE DEVELOPMENT OF THE CONCEPT OF ISLAMISM**

### Summary

*Hayk Kocharyan*

*PhD, Department of Arabic Studies, YSU*

*E-mail: hkocharyan@ysu.am*

**Keywords:** *Islamism, postislamism, political Islam*

The article attempts to analyze the process of the emergence of the concept of "Islamism" and the stages of its formation.

The emergence and formation of the concept of "Islamism" is closely connected with the French intellectual environment. For the first time, the

term “Islamism” appears in the second half of the 18th century in the works of the famous French philosopher Voltaire. Voltaire, by this term, understood what is meant today by the concept of "Islam" in general.

The modern understanding of "Islamism", which refers to modern trends and movements in Islam, that have a political agenda or somehow influence political processes, also appears in the French academic environment in the works of Gilles Kepel.

It must be emphasized that in the modern academic environment there is no single approach to the concept of "Islamism".

## НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ РАЗВИТИЯ ПОНЯТИЯ ИСЛАМИЗМ

Резюме

*Այկ Կոչարյան*

*к.и.н., доцент кафедры Арабистики ЕГУ*

*эл. - почта: hkocharyan@ysu.am*

**Ключевые слова:** *ислаимизм, пост ислаимизм, политический ислам*

В статье делается попытка проанализировать процесс возникновения понятия «ислаимизм» и этапы его становления.

Возникновение и становление понятия «ислаимизм» тесно связано с французской интеллектуальной средой. Впервые термин «исмализм» появляется во второй половине 18-го века в работах известного французского философа Вольтера. Вольтер под этим термином понимал то, что сегодня подразумевается понятием «ислам» вообще.

Современное понимание «ислаимизм», которым принято обозначать современные течения и движения в исламе имеющие политическую повестку или как-то влияют на политические процессы, тоже появляется во французской академической среде в работах Жилья Кепеля.

Нужно подчеркнуть, что в современной академической среде нет единого подхода к понятию «ислаимизм».